

Ի սմին ժամանակի Հաննա վարդապետ, որ տակաւին կենդանի էր, միաբանեալ ընդ փոխանորդին Յունաց, նորոգեցին ընկերութեամբ զտանիս եկեղեցւոյ Ս. Աստուածածնի՝ ի ձորն Գեթսեմանի, եւ բարձրացուցին զորմն, որ ի գաւթի անդ, նոյնպէս նորոգեցին զայլ կարեւոր տեղիս թէ ի ներքս եւ թէ արտաքս:

Հաննա վարդապետ կամ Յովհաննէս եպիսկոպոս Երուսաղէմացի, ի ժամանակէ անտի տեղակալաց, մինչեւ ցայս վայր, անխոնջ ջանիւք եւ մտադիւր յօժարութեամբ ծառայեաց եւ վաստակեցաւ յամենայն գործս Աթոռոյն, աջակցելով Գրիգորի Շղթայակրի ի զանազան դատաստանս ընդ օտարաց, եւ ի շինութիւնս Ս. Տեղեաց. եւ ի գիր եհար զամենայն անցս իւրոյ ժամանակի. եւ ըստ տուիցելոյ նմա շնորհին, նկարեաց զհրալալի պատկերս տնօրէնութեան Փրկչին, եւ սրբոց նորին, սքանչելի արուեստիւք, որպէս տեսանի ի տաճարի Ս. Յակոբայ եւ յայլ եկեղեցիս. կաթուածաշար եղեալ անկաւ ի մահիճս, եւ տառապեալ ի նմին աւելի քան զերկուս ամս վախճանեցաւ յամի Տեառն 1733 ի 11 ամսեանն Յունիսի, եւ թաղեցաւ ի վանս Ս. Փրկչի, թողեալ սուգ մեծ, առաւել քան ազգականաց իւրոց, նորին Գրիգորի Պատրիարքի, մինչեւ յանձն առնուլ իսկ հրաժարիլ ի Պատրիարքական յԱթոռոյ, զի յանկարծակի զրկեցաւ հաւատարիմ գործակցէ իւրմէ, որպէս է տեսանել ի նամակի նորին, զոր վըռտաշար սրտիւ գրեաց առ Յովհաննէս Պատրիարք եւ առ իշխանաւորս ազգին ի Կոստանդինուպօլիս, ուր յետ այլոց բանից ասէ. Արդ հնազանդեալ յայնժամ հարկեցուցիչ բանից ձերոց արկի զպարանոց իմ ընդ լծով ծառայութեան ազգին. յաջողութեամբ Տեառն եւ օգնութեամբ ձերով՝ աղատեցաւ Ս. Աթոռն ի պարտուց եւ յաղքատութեանց եւ ի նախատանաց օտարաց, որոյ վասն շնորհ ունիմ յԱստուծոյ եւ համայն յազգէն: Արդ՝ սիրելիք իմ, եւ տեսարք Ս. Տանս, ես ծերացայ եւ անկարող ի գործս. մանաւանդ միջաբեկ եւ յուսակտուր արար զիս տալաժամ մահ սիրելի Աթոռակալին խոյ, եւ կամ ի սուգ անմխիթար. ճամարիտ եւ անկեղծ սրտիւ գրեմ ձեզ, զի ես այսուհետեւ անկարող եմ կատարել զգործս զայս. քաջ իսկ գիտէք, զի յառաջ քան